

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2011 թվականի N 733-Ն

ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒԳՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 919-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները՝ համաձայն հավելվածի:

2. Մահմանել, որ՝

1) նոտարի կողմից կատարվող յուրաքանչյուր նոտարական գործողության համար վճարը ներառում է տվյալ նոտարական գործողության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ուսումնասիրումը, պարզաբանումը, այդ թվում՝ օրինակելի ձևերով փաստաթղթերի պատրաստումը և տրամադրումը՝ բացառությամբ սույն որոշմամբ հաստատված սակագների 17-րդ ^ա կետով նախատեսված նոտարական գործողությունների դեպքում իրավական փաստաթղթերի պատրաստման և տրամադրման.

2) սույն որոշմամբ հաստատված սակագների 17-րդ ^ա կետով նախատեսված նոտարական գործողությունների դեպքում նոտարի կողմից իրավական փաստաթղթերի պատրաստման և տրամադրման համար կարող է լրացուցիչ գանձվել սույն որոշմամբ հաստատված սակագների 37-րդ ^ա կետով նախատեսված վճարը.

3) նոտարի կողմից իր գրասենյակից դուրս նոտարական գործողություններ կատարելու դեպքում կարող է գանձվել լրացուցիչ վճար՝ ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի 10-ապատիկի չափով.

4) նոտարի կողմից վավերացված նոտարական փաստաթղթերում թույլ տրված գրավրիպակների, թվաբանական սխալների ուղղումը և արդյունքում նոր նոտարական փաստաթղթերի տրամադրումը համապատասխան նոտարի կողմից կատարվում է անվճար.

5) նոտարի կողմից վավերացված փաստաթղթի նոտարական վավերացմամբ յուրաքանչյուր կրկնօրինակի տրամադրման համար վճարվում է հիմնական փաստաթղթի համար ծառայության վճարի մեկ քառորդը.

6) նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները պետք է փակցված լինեն նոտարական գրասենյակում՝ նոտարական ծառայություններից օգտվողների համար տեսանելի տեղում:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 25-ի «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները հաստատելու մասին» N 919-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2011 թ. հունիսի 2
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 26-ի N 733-Ն որոշման

ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՄՍՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԿԱԳՆԵՐԸ

| Նոտարական գործողության տեսակը | Նվազագույն աշխատավարձի նկատմամբ գործակիցը |
|---|--|
| 1. Անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման (փոխանակման, առուվաճառքի, հանձնման և այլն) պայմանագրերը վավերացնելու համար՝ | |
| 1) գյուղատնտեսական նշանակության հողամասերի դեպքում | 0.5 |
| 2) այլ անշարժ գույքի դեպքում | 10-15 |
| 3) ավտոտնակի դեպքում | 6-8 |
| 4) անշարժ գույքի նվիրատվություն կամ նվիրաբերություն (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի)՝ | |
| ա. առաջին հերթի ժառանգների համար | 5-7 |
| բ. երկրորդ հերթի ժառանգների համար | 7-9 |
| գ. այլ անձանց համար | 10-15 |
| դ. աղետի գոտու բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացվող երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման համար | 1 |
| 5) գյուղատնտեսական նշանակության հողամասերի նվիրատվություն կամ նվիրաբերություն | 0.5 |
| 2. Շարժական գույքի օտարման (փոխանակման, առուվաճառքի, հանձնման և այլն) պայմանագրերը վավերացնելու համար՝ | |
| 1) ավտոտրանսպորտային միջոցների համար | 5-8 |
| 2) այլ շարժական գույքի համար | 2-5 |
| 3. Ռենտայի պայմանագրերը վավերացնելու համար | 5-7 |
| 4. Անշարժ գույքի միավորման պայմանագրերը վավերացնելու համար՝ | |
| 1) գյուղատնտեսական նշանակության հողերի դեպքում | 0.5-1 |
| 2) այլ անշարժ գույքի դեպքում | 10-12 |

| | |
|---|-------|
| 5. Անշարժ գույքի բաժանման պայմանագրերը վավերացնելու համար՝ | |
| 1) գյուղատնտեսական նշանակության հողերի դեպքում | 0.5-1 |
| 2) այլ անշարժ գույքի դեպքում | 10-12 |
| 6. Անշարժ գույքի օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման և այլն) պայմանագրերը վավերացնելու համար՝ | |
| 1) գյուղատնտեսական նշանակության հողամասերի դեպքում | 0.5-1 |
| 2) բնակելի տարածության դեպքում՝ | |
| ա. եթե կողմերից մեկը ֆիզիկական անձ է | 5-8 |
| բ. եթե երկու կողմերն իրավաբանական անձինք են | 8-10 |
| 3) ոչ բնակելի նշանակության շենքի կամ շինության դեպքում՝ | |
| ա. եթե կողմերից մեկը ֆիզիկական անձ է | 10-12 |
| բ. եթե երկու կողմերն իրավաբանական անձինք են | 12-15 |
| 7. Շարժական գույքի օգտագործման (վարձակալության, անհատույց օգտագործման և այլն) պայմանագրերը վավերացնելու համար | 4-6 |
| 8. Ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրերը վավերացնելու համար | 8-10 |
| 9. Գրավի պայմանագրերը վավերացնելու համար՝ | |
| 1) գյուղատնտեսական նշանակության հողամասերի դեպքում | 0.5-1 |
| 2) շարժական գույքի գրավի ^{ան} դեպքում | 6-9 |
| 3) անշարժ գույքի հիփոթեքի դեպքում | 10-12 |
| 4) իրավունքների գրավի դեպքում | 4-6 |
| 5) կոշտ գրավի դեպքում | 8-10 |
| 6) շրջանառության մեջ գտնվող ապրանքների գրավի դեպքում | 6-8 |
| 7) գրավի այլ տեսակների դեպքում | 3-5 |
| 10. Երաշխավորության պայմանագրերը վավերացնելու համար | 5 |
| 11. Փոխառության պայմանագրերը վավերացնելու համար | 4-6 |
| 12. Կառուցապատման իրավունքի պայմանագրերը վավերացնելու համար | 8-10 |
| 13. Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրերը վավերացնելու համար՝ | |
| 1) շարժական գույք | 4-6 |
| 2) անշարժ գույք | 10-12 |
| 14. Նախնական պայմանագրերը վավերացնելու համար | 7-9 |
| 15. Պայմանագրում փոփոխություն և լրացումներ կատարելու, | 2-8 |

պայմանագիրը լուծելու մասին համաձայնագրերը, պայմանագրերը վավերացնելու համար

16. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունք ունեցող անձանց և փոխնակ մոր կամ հայտնի դոնորի միջև պայմանագրերը վավերացնելու համար 20-22

17. Խառը պայմանագրերի վավերացման համար 10-15

18. Այլ գործարքների վավերացման համար 6-10

19. Ժառանգության իրավունքի վկայագիր տալու համար`

1) առաջին հերթի ժառանգների համար`

ա. ժառանգական զանգվածում 1-2 միավոր գույքի դեպքում 3-5

բ. ժառանգական զանգվածում 3-7 միավոր գույքի դեպքում 5-8

գ. ժառանգական զանգվածում 8-ից ավելի միավոր գույքի դեպքում 8-15

2) երկրորդ հերթի ժառանգների համար`

ա. ժառանգական զանգվածում 1-3 միավոր գույքի դեպքում 5-8

բ. ժառանգական զանգվածում 3-7 միավոր գույքի դեպքում 8-10

գ. ժառանգական զանգվածում 8-ից ավելի միավոր գույքի դեպքում 10-15

3) այլ անձանց համար 10-15

20. Լիազորագրեր վավերացնելու համար`

1) անշարժ գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքի լիազորագրեր 1-5

2) շարժական գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման (բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների տնօրինման) իրավունքի լիազորագրեր 0.5-1.5

3) ավտոտրանսպորտային միջոցների տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքի լիազորագրեր 2-3

4) գույքային իրավունքների կառավարման լիազորագրեր 1-3

5) այլ լիազորագրեր 0.5-2

21. Ժառանգական գույքի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման համար 10-30

22. Փաստաթղթերի թարգմանության յուրաքանչյուր էջի իսկությունը վավերացնելու համար 2-8

23. Փաստաթղթերի պատճենները և դրանցից քաղվածքները վավերացնելու համար`

1) մեկ էջի համար և,

2) մեկից ավելի յուրաքանչյուր լրացուցիչ էջի համար`

1

| | |
|--|------------------------------|
| ա. նոտարական գրասենյակում պատճենահանվելու դեպքում | 0.1 |
| բ. այլ դեպքերում | 0.5 |
| 24. Փաստաթղթերի վրա յուրաքանչյուր ստորագրության իսկությունը վավերացնելու համար | 0.5-1 |
| 25. Թարգմանչի ստորագրությամբ յուրաքանչյուր փաստաթղթի իսկության վավերացման համար | 0.5 |
| 26. Կտակի վավերացման համար | 2-5 |
| 27. Ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր տալու համար | 2-5 |
| 28. Քաղաքացու ողջ լինելու փաստը հաստատելու համար | 2 |
| 29. Քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը հաստատելու համար | 2 |
| 30. Լուսանկարում պատկերված անձի և քաղաքացու նույնությունը հաստատելու համար | 2 |
| 31. Փաստաթղթեր ներկայացնելու ժամանակը հաստատելու համար | 1 |
| 32. Ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների դիմումները, հայտարարությունները կամ այլ փաստաթղթեր այլ ֆիզիկական անձանց կամ կազմակերպություններ փոխանցելու համար | 3 |
| 33. Դրամական գումար կամ արժեթղթեր դեպոզիտ ընդունելու, պահպանելու, հանձնելու կամ վերադարձնելու համար | դեպոզիտ գումարի 0.5-1 տոկոսը |
| 34. Փաստաթղթեր ի պահ ընդունելու համար (յուրաքանչյուր օրը) | 0.3-0.5 |
| 35. Ապացույցների ապահովման համար՝ | |
| 1) նոտարական վավերացմամբ փաստաթուղթ կազմելու համար և, | 4 |
| 2) նոտարի աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար | 6 |
| 36. Կազմակերպության ընդհանուր ժողովի կամ կոլեգիալ այլ մարմնի նիստի արձանագրությունը վավերացնելու համար | 5-25 |
| 37. Անձանց առաջարկությունների հիման վրա և նրանց պահանջով ոչ օրինակելի գործարքների, հաստատման ոչ ենթակա ոչ օրինակելի փաստաթղթերի կամ իրավական այլ փաստաթղթերի պատրաստման և տրամադրման, ինչպես նաև գործարքների վավերացման կամ փաստաթղթերի պատրաստման հետ չկապված | 5-10 |

իրավական օգնության կամ խորհրդատվության տրամադրման կամ այլ
ծառայությունների մատուցման համար՝ ծառայության մատուցման համար
անհրաժեշտ յուրաքանչյուր ժամի համար

(Հավելվածը լրաց 07.03.12 N 408-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան